

ՔԱՐՈՉԽՈՍԱԿԱՆ

Տ. ԶԱՐԵՀ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱԲԱՂՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԳՅՈՒՏ ԽԱՉԻ ՏՈՆԻՆ

(28 հոկտեմբերի 2007 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյ Սրբոյ, Ամէն»:

*«Ես եմ Ճանապարհը, Ճշմարտությունը և
Կյանքը»:*

(Հովհ. ԺԴ 6)

Տիրոջ այս պատգամը, անտարակույս, խորհելու առիթ է տալիս երկնքի արքայության, հավիտենական կյանքի, Նրա նախանշած նեղ ճանապարհի՝ Խաչի ճանապարհի մասին, որով պարտավոր է քայլել յուրաքանչյուր ճշմարիտ քրիստոնյա:

Միբելի հավատացյալ քույրեր ու եղբայրներ, ուրախությամբ հիշատակենք, որ այսօր Գյուտ Խաչի տոնն է, Խաչին նվիրված տոներից մեկը: Տոնի հիմքում այն ավանդությունն է, ըստ որի 327 թվականին Երուսաղեմ ուխտի գնացած Հեղինե կայսրուհին՝ Կոստանդիանոս կայսեր մայրը, մոռացված Գողգոթայից՝ գտավ Տիրոջ նվիրական խաչափայտը: Ավանդությունը պատմում է նաև, որ Գողգոթայում գտնվեցին երեք խաչեր: Այդ խաչերից Տիրոջ Խաչը զատելու համար դրանք հերթով դրվեցին մի մահացած պատանու վրա: Խաչերից մեկն իր վրա կրելով՝ մահացած պատանին հարություն առավ: Այն Տիրոջ Խաչն էր:

Գյուտ Խաչի տոնի խորհուրդը մեզ կրկին դեպի Տիրոջ Խաչն է տանում, որով փրկագործվեց մարդկությունը, որն Աստվածային սիրո գերագույն արտահայտություն դարձավ և մատնանշեց այն միակ ու ճշմարիտ ճանապարհը, որով միայն անցնելով՝ Քրիստոնյան պետք է դառնա Որդեգիրն Աստծու: Տերը շատ հստակ բնութագրեց այդ ճանապարհը. «Ես եմ Ճանապարհը...»:

Միբելի հավատացյալներ, այսօր այդ ճանապարհի մասին է, որ ուզում եմ խոսել ձեզ հետ, այն ճանապարհի, որը մատնանշում է Տիրոջ խաչափայտով սրբագործված ճշմարիտ կյանքի ուղին:

Աստված սիրեց Իր ստեղծագործությունը, Իր իսկ պատկերով ստեղծած բանական էակին՝ մարդուն: Մակայն մարդն իր ազատ կամքով շատ շուտ հայտնվեց չարի ճիրաններում, չկարողացավ Աստծու մատնանշած ճիշտ ուղիով ընթանալ: Եվ, վերջապես, Աստված գերագույն զոհողությունն արեց. մարդկային մարմնով ծնվեց Նրա Միածին Որդին, Ով ուսուցանեց մարդկանց, ապա չարչարվեց, նախատվեց ու խաչվեց մեր մեղքերի համար՝ դառնալով փրկության միակ ճանապարհը: Մարդը մեղքի մեջ հայտնվեց Ադամով, սակայն Հիսուս, որպես երկրորդ Ադամ, փրկագործման ուղիով՝ ճշմարիտ ճանապարհով կրկին տարավ նրան, մոտեցրեց Աստծու շնորհած գահին, Աստծուն ու մարդուն հաշտեցնելու հավերժական առաքելությունն ունեցավ: Իսկ Իր երկնային կյանքի ավարտին, Խաչի վրա Իր սրբազան աղոթքում Տերը ասաց. «Ով Հայր, այն գործը, որ Ինձ տվեցիր, կատարեցի, ավարտեցի»:

Մակայն մեղսակից մարդը ոչ միշտ է ականջալուր ճշմարիտ ուղիով ընթանալու Տիրոջ պատգամին: Նա իր ապրած կյանքի ողջ ընթացքում հաճախ է շեղվում իր համար նախանշված ուղուց և ստիպված է լինում թանկ հատուցել իր սխալների

համար, ինչպես Ղովտի կինը, երբ փախչում էին Սողոմ-Գոմորից՝ Աստծու հրահանգին հակառակ ետ նայեց և դարձավ քար, որովհետև հին կյանքից դժվար էր հրաժարվում: Ցավոք, Աստվածային պատվիրաններն անտեսելով, մարդը հաճախ է ետ դառնում և իր սխալները գտնելու և դրանցից ազատվելու փոխարեն հաճույքով է հիշում դրանք ու կրկին ետ նայում Ղովտի կնոջ նման ու արձանանում կյանքի ու մահվան սահմանագծին:

Մենք՝ քրիստոնյաներս, որ կրում ենք Փրկչի անունը և հետևորդներն ենք Նրա, որպեսզի երբեք չշեղվենք ճշմարիտ ուղուց, պետք է Տիրոջը նայենք միշտ, չէ որ հիշում ենք, թե Նա է մեր հավատքի գորագլուխը, մեր Տերն ու Փրկիչը: Ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Նայենք Հիսուսին՝ հավատի գորագլխին, այն կատարելագործողին, որը հանձն առավ խաչը, արհամարհեց ամոթը և նստեց Աստծու Աթոռի աջ կողմում» (Եբր. ԺԲ 2):

Հիսուս Քրիստոս էր կոչված ողորմալու մարդկային ցեղը և Իր անձով, գոյությամբ մարդկային մարմին առավ՝ դառնալով ամեն ինչով կատարյալ մարդ, առանց մեղքերի, որպեսզի մեր կյանքում առկա անբնական ամեն բան վերափոխվի բնականի, և մարդկանց դարձնի իր նախանշած ճանապարհի ու պատվիրանների հետևորդներ: Նա ցույց տվեց մեզ սուրբ բարեպաշտություն ու հստակ օրենքներ, որպեսզի մարդը լինի բնական վիճակում, ինչպես նրան ստեղծեց Աստված: Ահա այս է ճշմարտությամբ պատմուճանված ճանապարհը, որ տանում է դեպի Աստված, դեպի հավիտենական կյանք:

Ճշմարտությունը Տերն է միայն, և մենք, երկյուղելով աստվածային արդարադատությունից, պիտի ապրենք ճշմարտին հետևելով: Պողոս Ադրիանապոլսեցի Պատրիարքը գրում է. «Կա երեք ճշմարտություն՝ սրտի, բերանի ու գործի...: Կարևորագույնն է միայն այն, որ Աստծուն է հատուկ ճանաչել՝ սրտի ճշմարտությունը»:

Անժխտելի է այն իրողությունը, որ մարդկային փոխհարաբերությունների մեջ այսօր առկա բազում չարիքներ գալիս են ճշմարտության բացակայությունից: Միլիարդներ, այդ ամենը հաղթահարելու համար նախ պետք է մեր մեջ, մեր սրտում, հոգում և մտքում ապրեցնենք աստվածային ճշմարտությունը՝ պատվիրանները, պատգամները, հորդորները, քանի որ Աստծուց չես թաքցնի քեզ: Աստված ամենատես է, և մենք մեկս մյուսի հանդեպ ճշմարիտ վերաբերմունքը իբրև առաքինություններից մեկն ունենալով, առաջնորդվենք ու չվախենանք ճշմարիտ խոսքից, ապրելակերպից, ճշմարիտ գործից, ճշմարիտ կյանքից:

Մենք պետք է երկյուղենք ոչ թե միմյանցից, այլ Աստծուց, որպեսզի նրա նախանշած ճշմարիտ ճանապարհով ընթանանք դեպի հավիտենական կյանք, ուր ամեն ինչ մաքուր է, ազնիվ ու շիտակ: Մեր կյանքի ամեն մի պահի, յուրաքանչյուր իրավիճակի պայմաններում երբեք չպետք է մոռանանք, որ Աստված հետևում է մեզ, և մենք մեր արարքներով պատասխանատու ենք Նրան, հաշիվ ենք տալու Նրա դատաստանի առջև: Իսկ այս աշխարհում եթե ապրելու ենք քրիստոնեական կյանքով՝ ազնիվ ու շիտակ, լինելու ենք բարի ու գթասիրտ, ապա հավատացեք, որ քրիստոնեական ճշմարտության նեղ, սակայն մաքուր ու լուսավոր ճանապարհով կարող ենք հանգիստ ու խաղաղ առաջնորդվել դեպի Կյանք, Լույս, դեպի հավիտենական ճշմարտություն: Եթե այդ ուղին ենք ընտրել, ուրեմն անբեկանելի հավատ պետք է ունենանք հանդեպ Աստծու արդարադատությունը, և երբեք չպետք է շեղվենք մեր ընտրած ուղուց: Յուրաքանչյուր պահ պետք է ականջալուր լինենք մեր հոգու ձայնին և հիշենք աստվածային դատաստանի մասին: Քննենք ինքներս մեզ և

տեսնենք, թե արդյո՞ք միմյանց նկատմամբ արդար ու ճշմարիտ ենք ապրում: Եթե այո, ուրեմն հավատացե՛ք, որ հաշտ կապրենք նաև երկնքի հետ:

Միրելի հավատացյալներ, ճիշտ ապրելու համար նաև շատ կարևոր է, որ յուրաքանչյուրս ունենանա իր կոչման գիտակցությունն այնպես, ինչպես այդ ուներ Տերը՝ Իր առաքելության ողջ ընթացքում: Նա մեզ Ստեղծողն ու Տիեզերքի Թագավորն է, սակայն երկրային Իր կյանքում խոնարհ ուսուցիչ էր, ապրում էր շատ պարզ մի կյանք, ո՛չ հարստություն ուներ, ո՛չ հզոր դաշնակիցներ, ո՛չ հզոր զորք, սակայն ամենուր հաջողում էր: Հիսուս երբեք խրթին վարդապետություններով չգրադվեց, այլ մարդկանց քարոզեց Աստծու թագավորության, այնտեղ հասնելու ճշմարիտ ուղու մասին, Աստծու հայրական հոգածության, մարդկանց հանդեպ ունեցած անչափելի սիրո, սրբության ու արդարության մասին: Նա բազում մարդկանց սրտեր գրավեց և այսօր էլ է գրավում՝ Իր պարզ ու շիտակ վարդապետությամբ, որով աշխարհի քաղաքակրթությունը հեղաշրջեց հիմնովին:

Այսօր արդեն բոլորս կարող ենք վկայել, որ Հիսուս հաջողեց, որովհետև ուներ կոչման գիտակցություն ու նպատակ: Նա աշխարհ եկավ ծառայելու համար, իսկ ծառայության ասպարեզները բազում էին: Այդ շատերից Նա միայն մեկն ընտրեց՝ գերագույնը, և որը միայն Ինքը՝ Աստվածորդին կարող էր անել՝ փրկել մեղքի մեջ թաղված մարդկությանը, բոլորին ավետել փրկության բարի լուրը: Նա Իր առաքելությանն անցավ ամբողջ սրտով ու բացառիկ նվիրումով:

Հիսուս հաջողեց, որովհետև երբեք չշեղվեց իր ուղուց, կոչման բարձր գիտակցությունից, որը թելադրում էր հստակ նպատակ: Իր առջև նպատակ ուներ, որին հասնելու համար տոկաց բոլոր դժվարություններին: Իր առաքելությունը նպատակադրված առաջ տանելով՝ երբեք չընկճվեց դժվարություններից, Իր առջև ծագած խնդիրներից չընկրկեց, չվախեցավ չարչարանքներից և, վերջապես, չերկնչեց խաչի վրա մահից, որն Իր առաքելության գագաթնակետն էր, կրեց այն և Իր հարությամբ հաղթեց մահը: Հիսուս հաղթահարեց այս ամենը, քանզի հնազանդ էր Հոր կամքին Իր ուսուցումներով ու պատգամներով: Նա հնազանդ մնաց Հորը նաև Գեթսեմանիում, անգամ Խաչի վրա, «...որովհետև ոչ թե Իմ կամքն էմ կատարում, այլ Նրա կամքը, Ով Ինձ առաքեց» (Հովհ. Ե 30): Մենք այսօր, սակայն, Երկրի վրա Աստծու կամքը լիովին չենք իրականացնում, որն, անտարակույս, միայն լուսավոր ուղիներով կառաջնորդի մեզ: Այսօր մարդկությունը լիովին հետևորդը չէ այդ կամքի, և իր սխալի կամ հապաղման համար շատ թանկ է հատուցում՝ բախումներ, պատերազմներ, արհավիրքներ, բազում դժբախտություններ: Այդ է պատճառը, որ թե՛ առողջ, թե՛ հիվանդ, տիրապետող թե՛ հպատակ, հարուստ թե՛ աղքատ, դժգոհ են կյանքից: Այս ամենից կարող ենք ձերբազատվել, երբ Աստծու կամքը կատարենք անմնացորդ նվիրումով, գերագույն հնազանդությամբ և քայլելով Հիսուսի շավղով, թերևս նաև հաճախ թանկ գոհողությունների գնով իրականացնենք մեր առաքելությունն այս կյանքում: Մեր արարքների պատասխանատուն մենք ենք, և պետք է աշխատենք ճիշտ ապրել այն կյանքը, որ մեզ է տրված Տիրոջ կողմից: Տեղին է մեջբերել արաբ բանաստեղծ Ճպրան Խալիլ Ճպրանի տողերը. «Ձեր մարմինը ձեր հոգու տավիղն է, և դուք եք, որ կարող եք նրանից առաջ բերել կա՛մ անուշ մեղեդի, կա՛մ խառնակ ձայներ»:

Այսօր մեր կյանքում էլ բազում են մարդիկ, ովքեր անընդհատ ձախողվում են իրենց գործերում՝ դժգոհելով, որ հաջողությունը երես է թեքել իրենցից: Նրանք իրենց ուժերը վատնում են ամենուր, բայց ոչ երբեք այն ասպարեզում, որ նրանց համար նախանշվել է Բարձրյալի կողմից: Նրանք ամեն ինչին կարող են խառնվել, ամենուր

հայտնվել, գրել ու ջնջել անվերջ, քննադատել բոլորին, իրենց սխալների համար այլ մեղավորներ փնտրել, ամեն ինչ քննարկման նյութ դարձնել: Եվ, վերջապես, նրանք պատրաստ են ամենուր ու ամեն պահի խոսել, սակայն խոսքն այդ չունի արժեք ու ուժ, որովհետև բացակա է այն նպատակը, գաղափարը, որի համար իրենք պայքարում են, որն իրականացնելու համար ապրում են և, վերջապես, չունեն կոչման գիտակցություն, որն իմաստավորելու է իրենց կյանքը: Բնականաբար, այդ մարդիկ երբեք չեն հաջողում, որովհետև նրանց հոգին նման է անապատի, ուր անվերջ փչում է ավազահար քամին:

Ամեն մեկն այս կյանքում ունի իր առաքելությունը, որն ի բարիս պետք է իրականացնի, որպեսզի հասնի դեպի հավիտենական կյանք տանող ճշմարիտ ճանապարհին: Սակայն մենք չպետք է հուսահատվենք նաև այս աշխարհի դաժան թելադրանքներից ու նյութապաշտ հրամայականներից, քանզի դրանք փորձություններ են, որ Տիրոջ օրինակով պետք է հաղթահարենք:

Այո, սիրելիներս, երբեք չպետք է հուսահատվել, միշտ հիշեք, որ անելանելի իրավիճակներ չկան, պարզապես պետք է ճիշտ ապրել Բարձրյալից մեզ շնորհված կյանքը, միշտ քայլել ճշմարիտ ճանապարհով, դեպի ուր առաջնորդում է մեզ Տիրոջ լույսը՝ միշտ հիշելով, որ աստվածահաճո ծառայության առաքելությունը տրված է միայն նրան, ով նպատակալաց է, կամքով արի, համբերատար և Աստծու կամքին հնազանդ:

Սիրելիներ, մաքրենք մեր սրտերը, նորոգենք մեր հոգին, բարիք գործենք, միշտ ճշմարտությամբ ապրենք և կլինենք Հիսուսի իրական հետևորդներ և այդպիսով՝ փրկված անձինք: Նաև անդադար աղոթենք, խնդրենք Քրիստոսի բարերարությունը, որպեսզի Նա առաքի մեզ Իր օգնությունը, զորակցությունն ու պաշտպանությունը, փրկի մեզ մեր հոգեկան անդորրը խաթարող չար ուժերից և երևույթներից՝ հաստատելով մեզ նախնական անեղծության մեջ: Կրկին հիշատակեմ առաքյալի խոսքը. «Ձեր բերանը ճշմարտությանը վարժեցրեք, որպեսզի Սուրբ Հոգին բնակվի մեր մեջ, որպեսզի ճշմարիտ ճանապարհով ընթանալով, պայծառացնենք կյանքը և փառք տանք Ամենակալին՝ մեզ ճշմարիտն ու առաքինին ուսուցանելու և մեր փրկության ուղին մատնանշելու համար»: Իսկ այդ ուղին մեզ տանում է դեպի Գողգոթայի խաչի վրա մեր մեղքերի համար գամված Տերը՝ Հիսուս Քրիստոս: Չէ որ Նա է «Ճանապարհը, Ճշմարտությունը և Կյանքը»:

Շնորհ, սեր և խաղաղություն ձեզ. Ամեն: